ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 8

«30» հունվարի 2019 թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի, մի կողմից, և **«Հայաստանի ազգային գրադարան»** պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Տ. Զարգարյանի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը պարտավորվում է սույն Պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում կատարել Պայմանագրի 2.3-րդ կետով և իր կանոնադրությամբ նախատեսված գրադարանային հավաքածուների պահպանում, համալրում, ընթերցողների սպասարկում, գրադարանային միջոցառումների կազմակերպում և այլ գործառույթներ (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. գրադարանային հավաքածուների պահպանման, համալրման, ընթերցողների սպասարկման, գրադարանային միջոցառումների կազմակերպման կանխատեսվող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների՝ հավելված N 1,

1.1.2. ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի՝ հավելված N 2,

1.1.3. ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները կատարման վերաբերյալ հաշվետվության՝ հավելված N 3:

1.2. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման դիմաց վճարումը կատարվում է դրամաշնորհի հատկացման ձևով՝ «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1124.Գրքի և գրչության ծրագրի» «11004.Գրադարանային ծառայություններ» միջոցառման համար նախատեսված բյուջետային հատկացումների սահմաններում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. 1. Պատվիրատուն պարտավոր է՝

2.1.1. Սույն պայմանագրի պահանջներին համապատասխան՝ Կատարողից ընդունել պատշաճ ձևով ու կարգով կատարված աշխատանքները և հաշվետվությունները:

2.1.2. Իր և Կատարողի կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում Կատարողին ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն:

2.2. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից սույն պայմանագրի կատարման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս կանոնադրական գործունեությանը (բացառությամբ օրենքով և Կատարողի կանոնադրությամբ սահմանված դեպքերի):

2.2.2. Կատարողից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկույթ սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին:

2.2.3. Իր իրավասությունների սահմաններում կասեցնել Կատարողի կողմից ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարվող աշխատանքները:
2.2.4. Կատարողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերստին կատարել ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարված աշխատանքները:
2.2.5. Վերահսկել սույն պայմանագրով Կատարողին հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը:
2.2.6. Պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտավորությունները վերանայել (փոփոխություն կատարել) նախորդ տարվա հաշվետվությունների արդյունքների հիման վրա:

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1. Ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքները, դրանց հաշվառումն ու գրանցումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և իրավական ակտերով նախատեսված ձևով ու կարգով:
2.3.2 Ապահովել գրադարանի կայուն գործունեությունը, ֆոնդարաններում գրադարանային փաստաթղթերի անվտանգ պահպանությունը:

Աշխատանք գրացուցակների հետ

2.3.3. Ապահովել այբբենական, կարգային և վերնագրային գրացուցակների համապատասխանեցումը գրադարանային հավաքածուներին:

Գրադարանային հավաքածուի համալրում և պահպանում

2.3.4. Ապահովել գրադարանային հավաքածուների համալրումը, հաշվառումը, պահպանությունը, վերականգնումը:
2.3.5. Ապահովել ՀՀ-ում թղթային և այլ նյութական կրիչներով ամեն տեսակի հրատարակությունների, մատենագիտական ու վիճակագրական պետական գրանցումն ու հաշվառումը: Ներկայացնել հաշվետվություն համալրման վերաբերյալ՝ նշելով աղբյուրները:
2.3.6. Ապահովել գրադարանային հավաքածուի համալրման աշխատանքները օտարերկրյա պետություններում հրատարակված հայագիտական բնույթի գրքերով:
2.3.7. Ձեռք բերել համապատասխան գրքեր՝ (բրայլյան, աուդիո) տեսողության խնդիրներ ունեցող օգտվողների համար և կազմակերպել դրանց սպասարկումը:
2.3.8. Իրականացնել գրքափոխանակություն ՀՀ, Արցախի Հանրապետության և օտարերկրյա պետությունների գրադարանների, կազմակերպությունների ու անհատների հետ:
2.3.9. Իրականացնել հնատիպ գրքերի հավաքածուից 6 միավոր գրքի և մշակութային նշանակության հավաքածուից **85** միավոր գրքի կազմի և էջերի վերականգնումը, ինչպես նաև գրքերի և պարբերական մամուլի ոչ պակաս, քան **21650** թերթի ախտահանումն ու մանրէազերծումը և ոչ պակաս, քան **23350** թերթ միավորի վերականգնումը:
2.3.10. Շարունակել գրադարանի ռուսերեն հավաքածուի անվանական և քանակական վերահաշվառման աշխատանքները: Մինչև 2019 թվականի դեկտեմբերի 1-ը ներկայացնել հաշվետվություն կատարված աշխատանքների ընթացքի վերաբերյալ:
2.3.11. Ապահովել հավաքածուների լիարժեք պահպանությունը, գրապահոցում ջերմախոնավային, սանիտարահիգիենիկ և լուսավորության նորմատիվային պահպանման հատուկ ռեժիմը և հակահրդեհային անվտանգության նորմերը:

Տեղեկատվության էլեկտրոնային սպասարկում

2.3.12. Ապահովել օտարերկրյա պետություններում հրապարակվող էլեկտրոնային հրապարակումների բաժանորդագրումը, միջգրադարանային բաժնույթի աշխատանքները, ինչպես նաև գրադարանային-տեղեկատվական ապասարկումը, այդ թվում էլեկտրոնային տեղեկույթի (ինտերնետ, տեսալսողական նյութեր, էլեկտրոնային հրապարակումներ) մատչելիությունը:

2.3.13. Համակարգել հայաստանյան գրադարանների համահավաք էլեկտրոնային գրացուցակին մասնակից կազմակերպությունների կողմից հավաքածուների մուտքագրման գործընթացը՝ ապահովելով էլեկտրոնային շտեմարանին մատչելիությունը և հասանելիությունը:

2.3.14. Շարունակել համալրումները «Հայ գիրք» և «Հայ մամուլ» շտեմարաններ:

2.3.15.Շարունակել հայերեն հատվածներ պարունակող այլալեզու գրքերի շտեմարանի ձևավորումը և համալրումը:

Գրադարանային փաստաթղթի թվանշանացումը

2.3.16. Համակարգել գրադարանային հավաքածուի թվայնացման աշխատանքները գործընկեր գրադարանների համագործակցությամբ:

2.3.17. Ապահովել «Հայաստանի ատենախոսությունների բաց մատչելիության պահոց»-ի ծրագրատեխնիկական ձևավորման, 1800 ատենախոսությունների թվայնացման աշխատանքները և դրանց տրամադրումը Բարձրագույն Որակավորման Կոմիտեին:

2.3.18. Շարունակել թվայնացման ծրագրի իրականացումը՝ «Հայ հնատիպ գրքի», նվազագույն տպաքանակ ունեցող հայագիտական գրադարանային փաստաթղթերի թվայնացված տարբերակների համալրման աշխատանքները, ինչպես նաև գրադարաններից ձեռք բերել Հայաստանի գրադարաններում բացակայող հայերեն հնատիպ գրքերի թվայնացված օրինակները:

2.3.19. Ապահովել վտանգված հավաքածուների և մեկ օրինակ նյութերի թվայնացման գործընթացը:

2.3.20. Ապահովել ՀԱԳ-ում պահվող **150** պլակատների թվայնացումը, մատենագիտական նկարագրությունը և համացանցում հասանելի դարձնելը՝ Կալիֆորնիայի համալսարանի (Լոս Անջելեսի մասնաճյուղի) հետ համատեղ:

Համագործակցություն

2.3.21. Գրադարանային գործի ոլորտում փոխգործակցության, կապերի ամրապնդման ու զարգացման նպատակով համագործակցել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարանի, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի, Պոլսի Պատրիարքության Օրմանյան Մատենադարանի, Մխիթարյան միաբանության գրադարանի /Վենետիկ և Վիեննա/, Բեյրութի Հայկազյան համալսարանի, Ռումինիայի, Իրանի Իսլամական Հանրապետության ազգային գրադարանի, Բեռլինի պետական գրադարանի, Չեխիայի, Ֆրանսիայի, Կոպենհագենի թագավորական, Ռուսաստանի և Բելառուսի ազգային գրադարանների, Հայաստանի պատմության թանգարանի, Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանի, Ե. Չարենցի տուն-թանգարանի, Երուսաղեմի Հայոց պատրիարքության Գյուլբենկյան գրադարանի, Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի «Ներսես Շնորհալի» գրադարանի, ՌԴ պետական գրադարանի, Կազանի համալսարանի գրադարանի, Մոսկվայի արվեստի պետական

գրադարանի, Հայաստանի ազգային արխիվի, Սարդարապատի հուշահամալիրի թանգարանի, Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի, Կալիֆորնիայի համալսարանի Լոս Անջելեսի մասնաճյուղի, Ալեքսանդրիայի գրադարանի /Եգիպտոս/ հետ:

2.3.22. Ապահովել Հայաստանի ազգային գրադարանի անդամակցությունը Եվրոպական ազգային գրադարանների հիմնադրամին («CENL»), «Գրադարանային միությունների և կազմակերպությունների միջազգային դաշնությանը» (ԻՖԼԱ), Եվրասիական գրադարանային միավորմանը (ԵԱԵ):

Ստանդարտ համարանիշների տրամադրում

2.3.23. Ապահովել ՀՀ-ում գրքի միջազգային ստանդարտ համարակալման (ISBN), երաժշտական (նոտագրական) հրատարակությունների միջազգային ստանդարտ համարակալման (ISMN) և պարբերականների միջազգային ստանդարտ համարակալման (ISSN) ազգային գործակալությունների վարման աշխատանքները:

2.3.24. Պատրաստել զեկույցներ ISBN, ISMN, ISSN միջազգային կենտրոններին՝ ազգային գործակալությունների կողմից կատարված աշխատանքների և համակարգերում ընդգրկված հրատարակչությունների տարեկան հաշվետվություն-ների մասին:

2.3.25. Տեղեկացնել տեղական հրատարակչություններին համակարգերի գործունեության և նրանցում տեղի ունեցած փոփոխությունների և նորությունների մասին (բանավոր, անմիջական շփումներով, էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով, նամակներով և տպագիր նյութերի տարածմամբ):

2.3.26. Կազմել տարվա ընթացքում միջազգային ստանդարտ համար ստացած գրքերի ցանկերը և յուրաքանչյուր եռամսյակ տրամադրել Պատվիրատուին:

Մատենագիտական և գիտահետազոտական աշխատանքներ

2.3.27. Մատենագիտական բոլոր գրառումներն իրականացնել նյութի նկարագրության միջազգային ստանդարտի պահանջների համաձայն (International Standard Bibliographic Description)՝ մեքենաընթեռնելի մատենագիտական գրառումները՝ որպես տեքստային ֆայլ (առանձին կամ փաթեթով) տարածելու հնարավորությամբ:

2.3.28. Ապահովել «Հայաստանի գրադարանները 2018 թ.» վիճակագրական վերլուծության, «Հիշարժան տարեթվեր 2020» օրացույցի, «Նոր գրքեր» տեղեկատվական ցանկի բովանդակության, մատենագիտական ցանկերի և մատենագիտական նյութերի կազմումը, հրատարակումն ու գրադարանի կայքէջում տեղադրումը:

2.3.29. Ընթացիկ մատենագիտության գծով կազմել և հրատարակել ազգային մատենագիտության «Հայ տպագրության տարեգրքերի» ամենամսյա ընթացիկ ցանկերը, իսկ հետադարձ մատենագիտության գծով՝ «Հայ թարգմանական գրականություն. 2011-2016 թթ.» ցանկերի մակետները և տպաքանակները նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ:

2.3.30.Վիճակագրության գծով կազմել և հրապարակել «Հրատարակությունները Հայաստանի Հանրապետությունում 2018թ.» ցանկը էլեկտրոնային՝ CD տարբերակով, ինչպես նաև «Հայաստանի ազգային գրադարանի տարեգիրք. ՋԼՄ արձագանքները» տեղեկատուի կազմումը և գրադարանի կայքէջում տեղադրումը: Տպաքանակը համաձայնեցնել Պատվիրատուի հետ:

2.3.31. Շարունակել Գրատպության թանգարանի նոր ցուցանմուշների ձեռքբերումը և ցուցադրությունը:

Միջոցառումներ

2.3.32. Ապահովել ավանդական միջոցառումների (Գրադարանավարի օր, Ազգային գրադարանային շաբաթ, Գիրք նվիրելու օր և այլն), գրքերի շնորհանդեսների, հեղինակների, մշակույթի գործիչների հետ հանդիպումների, գրական ցերեկույթների, երեկոների, ցուցահանդեսների և այլ միջոցառումների կազմակերպումը: Կազմակերպել միջոցառումներ՝ ըստ 2019 թ. հոբելյանների հաստատված ցանկի, գրքին, ընթերցանությանը և գրականությանը նվիրված ազգային և միջազգային օրերի: Կազմակերպել Ֆրանկոֆոնիայի միջազգային երկամսյակին նվիրված միջոցառումներ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդը 2019թ. հռչակել է Ընտանիքի տարի, իսկ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Առաջինը՝ Հայ մամուլի տարի: Ընթացիկ տարում կազմակերպել համապատասխան միջոցառումներ:

Հոբելյաններ՝ Հովհաննես Թումանյան-150, Կոմիտաս-150, Գևորգ Էմին-100, Լևոն Շանթ-150, Տիգրան Մանսուրյան-80, Սոս Սարգսյան-90, Երվանդ Օտյան-150, Ռոբերտ Ամիրխանյան-80, Սիլվա Կապուտիկյան-100, Վազգեն Սարգսյան-60:

2.3.33. Գրատպության թանգարանում «Թանգարանների գիշեր», «Թանգարանների միջազգային օր», «Եվրոպական ժառանգության օրեր» միջոցառումների խորագրե-րին համապատասխան մշակել նոր ծրագրեր, կազմակերպել միջոցառումներ, ցուցահանդեսներ:

2.3.34. Ապահովել միջոցառումների հանրայնացումը մամուլի, սոցցանցերի, լրատվական տարբեր կայքերի միջոցով: Համագործակցել հրատարակչությունների և գրավաճառ ցանցի հետ՝ նոր գրքերի շնորհանդեսները համատեղ կազմակեր-պելու նպատակով:

2.3.35. Կազմակերպել և իրականացնել հոկտեմբերի 7-ին Գրադարանավարի օրվան նվիրված միջոցառումը և բուկլետների տպագրությունը՝ ծրագիրը և բուկլետների ձևավորումը համաձայնեցնելով Պատվիրատուի հետ:

2.3.36. Կազմակերպել և իրականացնել միջոցառումներ նվիրված ՀՀ պետական, ժողովրդական տոներին և հիշատակի օրերին:

2.3.37. Գրադարանում նոր միջավայր ձևավորելու նպատակով ակտիվացնել համագործակցությունը մասնավոր կազմակերպությունների, գրողների, ստեղծագործական միությունների հետ, նպաստել նոր ծառայությունների ներդրմանը:

Կրթական ծրագրեր

2.3.38. Կազմակերպել տեսողության խնդիրներ ունեցողների համար 1 գործնական պարապմունք:

2.3.39. Շրջիկ գրադարանի և «Գրաբուս» ծրագրի շրջանակում ապահովել հանրապետության բնակավայրերի բնակչության գրադարանային-տեղեկատվական սպասարկման ծառայությունների իրականացումը և **Գեղարքունիքի, Տավուշի, Լոռու, Շիրակի և Վայոց ձորի** մարզերի համայնքային գրադարաններին, ինչպես նաև ապահովել զորամասերի և քրեակատարողական հիմնարկների գրադարաններին գրականության տրամադրումը, մարզերում իրականացնել Գրաբուսի այցելությունները՝ նախապես կազմակերպելով դրանց գովազդարշավը՝ գովազդային պաստառների տեղադրմամբ, սոցցանցերով և այլ միջոցներով:

2.3.40 «Աջակցություն գրականության հրատարակմանը» ծրագրի շրջանակում աջակցել 19 գրքի ստեղծագործական և հետազոտական աշխատանքների ստեղծմանը,

«Թարգմանական ծրագրեր»-ի իրականացմանը, «Ոչ պետական մամուլի հրատարակում» ծրագրի շրջանակում ապահովել 26 անուն մամուլի հրատարկմանը, ապահովել Հայաստանի մասնակցությունը Գրքի միջազգային ցուցահանդեսներին:

2.3.41 Ապահովել պետական պատվերով և աջակցությամբ հրատարակված և ձեռք բերված գրականության բաշխման գործընթացը:

2.3.42. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով Պայմանագրի պարտադիր պահանջները:

2.3.43. Պայմանագրից բխող աշխատանքները չկատարելու դեպքում վերադարձնել Պատվիրատուի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 1.0 (մեկ) տոկոսի չափով:

2.3.44. Հրապարակել Պատվիրատուի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին:

2.3.45. Սույն Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված աշխատանքների կատարման գործընթացը կազմակերպել «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.3.46. Սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել Պատվիրատուի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան:

2.3.47. Պատվիրատուին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտներն անհապաղ վերացնելու համար:

2.3.48. Պատվիրատուի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն աշխատանքների կատարման ընթացքի մասին, ինչպես նաև ներկայացնել սույն պայմանագրի կատարմանը վերաբերող բոլոր տեսակի փաստաթղթերը (ֆինանսական և բովանդակային հաշվետվություն): Բովանդակային հաշվետվության հետ ներկայացնել իրականացված միջոցառումների մասին համապատասխան նյութեր (լուսանկարներ, լոգոտիպ կամ այլ գրաֆիկական պատկեր կամ ազդագրեր), հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով:

2.3.49. Պատվիրատուին ներկայացնել եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն և 2015 թվականի ապրիլի 1-ի N 176-Ն հրամանների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով:

2.3.50. Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցնել նրա իրավասությանը վերապահված հարցերի լուծման տարբերակները:

2.3.51. Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2019 թվականի փետրվարի 20-ը Պատվիրատուի հաստատմանը ներկայացնել Կատարողի կողմից եկամուտների և բյուջետային հատկացումների հաշվին իրականացվող ծախսերի (ելքերի) առանձին տեսակների նախահաշիվը՝ համապատասխան հիմնավորումներով: Նախահաշվի յուրաքանչյուր ծախսային ուղղության մեջ կատարվող փոփոխությունը նախապես՝ մինչև փաստացի ծախսերի կատարումը համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Նախահաշվում փոփոխությունների ներկայացման առաջարկի վերջնաժամկետն է 2019 թվականի դեկտեմբերի 20-ը: Աշխատանքների իրականացման արդյունքում առաջացած

տնտեսումները (խնայողությունները) ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2019 թ. դեկտեմբերի 25-ը:

2.4. Կատարողն իրավունք ունի՝

2.4.1. Պատվիրատուից պահանջել ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և Կատարողի կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված աշխատանքները:

2.4.2. Պատվիրատուից պահանջել վերացնել Կատարողի գործողություններից (անգործությունից) անկախ՝ Պատվիրատուի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները:

2.4.3. Վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների ընդհանուր արժեքը սահմանված է **647 445.5** (վեց հարյուր քառասունյոթ միլիոն չորս հարյուր քառասունհինգ հազար հինգ հարյուր) հազար դրամ՝ ներառյալ հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները: Այդ գումարի չափը կարող է փոփոխվել սույն պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարը Պատվիրատուն պետք է Կատարողին վճարի սույն պայմանագրի 2-րդ հավելվածով սահմանված ժամկետներում, Կատարողի՝ սույն պայմանագրում նշված գանձապետական հաշվեհամարին փոխանցումներ կատարելու եղանակով:

3.3. Կատարողի կողմից աշխատանքների կատարման՝ սույն պայմանագրով սահմանված ցուցանիշներն ու պայմանները խախտելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի վերանայել սույն պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարի չափը և դրա վճարման ժամանակացույցը:

3.4. Համաձայն «ՀՀ 2019 թվականի բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2019 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում երկու Կողմերի ստորագրության պահից և գործում է մինչև 2020 թվականի հունվարի 31-ը:

4.2. Սույն Պայմանագրի գործողությունը տարածվում է 2019 թ. հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1-ին կետում նշված և կատարված աշխատանքները Կատարողի կողմից ներկայացվում են Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը (հավելված 3):

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ սույն պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու կամ կանխատեսվող եկամուտներից զրկելու համար կողմերից յուրաքանչյուրը կրում է պատասխանատվություն մյուս կողմին պատճառած վնասների և բաց թողնված օգուտների լրիվ ծավալով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ սույն պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների և բաց թողնված (չստացված) եկամուտների լրիվ չափով փոխհատուցում:

6.3. Սույն պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը կողմերից որևէ մեկի համար այն կատարել շարունակելը աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում մյուս կողմն իրավունք ունի կամ ստանալ սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել սույն պայմանագրի հարկադիր կատարումը:

6.4. Սույն պայմանագրով սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանվելու դեպքում վերջինս, եթե Պատվիրատուին չի ներկայացրել դրա վերաբերյալ հիմնավոր բացատրություն, վճարում է տույժ Պայմանագրի գնի 0.01 (մեկ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացման յուրաքանչյուր օրացուցային օրվա համար:

6.5. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կատարողը, եթե Պատվիրատուին չի ներկայացրել դրա վերաբերյալ հիմնավոր բացատրություն, վճարում է տուգանք չկատարված աշխատանքի 0.5 (հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

7.2. Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով՝ առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության:

7.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի երկկողմ գրավոր համաձայնություն կազմելու միջոցով:

7.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.5. Սույն պայմանագիրը կնքելիս կողմերը հաստատում են, որ դրանով իրենց շահերը և օրինական իրավունքները ոչ մի կերպ չեն խախտվում կամ սահմանափակվում:
7.6. Սույն պայմանագիրը կազմված է 12 թերթից (ներառյալ հավելվածները), կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

8. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

Պատվիրատու՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, հասցեն՝ 0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն N 2, հաշիվ N 900011031011, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն, հեռ.՝ 011529349:
Կատարող՝ «Հայաստանի ազգային գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, գրանցման հասցեն՝ Երևան, Տերյան 72, ՀՎՀՀ՝ 01506092, ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն, գանձապետական հաշիվ N 900018001538, հեռ.՝ 58-42-59:

Պատվիրատու՝
Հայաստանի Հանրապետության
մշակույթի նախարարության
գլխավոր քարտուղար՝

Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կ.Տ.

Կատարող՝
«Հայաստանի ազգային գրադարան»

ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Տ. ՋԱՐԳԱՐՅԱՆ

Կ.Տ.